

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ԽԱՌԸ» («ՆԱԽԱԾԱՆՑԱՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ» ԵՎ «ԲԱՐԴԱԾԱՆՑ») ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ս. Ա. ԳԱՍՏՅԱՆ

Հայերենի բառակազմությանը նվիրված վերջին մի քանի ուսումնասիրություններում առանձնացվում է բառակազմական մի նոր եղանակ, որի միջոցով, ըստ այդ կարծիքը պաշտպանողների, ստացվում են այսպես կոչված «խառը» տիպի՝ նախածանցավորջածանցավոր և միաժամանակյա բարդամբու ածանցմամբ կազմված բաղադրություններ: Նորմոտությունը կատարված է ռուս քերականագիտության «բարերար ազդեցությամբ», և այս խնդրում առաջնությունը, ըստ երևույթին, պատկանում է Ռ. Ս. Մանուչարյանին<sup>1</sup>:

Ըստ այս մոտեցման, ածանցավոր բառերի բառակազմական հիմքերով դասակարգման հստակ տարբերակելի և հայերենի ածանցավոր բառերի բառակազմական հիմքերի կազմությունը ճշգրտորեն արտացոլող պարզաձանցավոր (պարզ հիմքերով կազմված ածանցավոր բառեր), հարաձանցավոր (ածանցավոր հիմքերով կառույցներ) և բարդաձանցավոր (բարդ հիմքերով ածանցավոր բառեր), որոնց մեջ որպես առանձին խումբ կարելի էր առանձնացնել բառակապակցական հիմքերով ածանցավոր կառույցները<sup>2</sup>, խմբերի կողքին հայտնվում է բառերի ըստ կազմության մի «նոր» տեսակ, որի մեջ մտցվող բառերը ստացվում են, իբր թե, «բարդման ու ածանցման համակցությամբ», կամ բառակազմական եղանակի տեսանկյունից բնութագրելով՝ համաժամանակյա բարդաձանցմամբ: Որոշ աղբյուրներում համաժամանակյան շի շեշտվում:

Ինչքանով են ի հաստատումն բառակազմական նոր եղանակի բերվող օրինակները համապատասխանում առաջադրվող տեսությանը: Մի կողմ թողնելով հարցին ոչ հիմնավորաբար, հընթացս անդրադարձող աղբյուրները, ստորև կփորձենք քննել հանրագիտական «Հայերենագիտական բառարանի»<sup>3</sup> և 5-րդ դարի գրաբարի բառակազմական կաղապարներին նվիրված լավագույն մենագրական ուսումնասիրության<sup>4</sup> տվյալները խնդրո առարկա հարցի վերաբերյալ՝ վերևում առաջադրված մոտեցման տեսանկյունից:

«Հայերենագիտական բառարանում» բարդաձանցումը դիտվում է նախ իբրև ածանցման ենթատեսակ (էջ 109), ապա և՛ բառակազմական եղանակ, «եթե բարդացման ու ածանցման համակցությամբ բառեր են կազմվում» (էջ 136), որոնք կոչվում են բարդաձանցավոր կամ բարդաձանց: Այստեղ բավականին հանգամանորեն քննվում են բառակազմական այն հիմքերը, որոնցից ածանցվում են, հեղինակի կարծիքով, բարդաձանցավոր բառերը:

<sup>1</sup> Տե՛ս Ր. С. Манучарян, Словообразовательные значения и формы в русском и армянском языках. Ер., 1981:

<sup>2</sup> Տե՛ս է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 230—231:

<sup>3</sup> Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

<sup>4</sup> Կ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:

Այժմ տեսնենք, թե որոնք են այդ հիմքերը, ըստ սերման բնույթի ինչ կառույցներ են դրված ենթախմբերում և դրանցից որոնք կարելի է համարել «բարդման ու ածանցման համակցություն» հետևանքով ստեղծված:

ա. Ըստ «Հայերենագիտական բառարանի» «բարդման ու ածանցման համակցությամբ» կազմված բառերի առաջին խումբը սերվում է համադրական, ավելի կոնկրետ՝ իսկական բարդություններից, ինչպես՝ գրադարան—գրադարանային, բանջարաբույժ—բանջարաբուծական և այլն: Բառակազմական ընդգծված և նման հիմքերի ածանցումները բառակազմական նախորդող ամենաքիչը մեկ քայլ են ենթադրում:

Օրինակ՝ բանջարաբուծական ածանցավոր բառի կազմությանը նախորդել է բանջարաբույժ բարդ բառի բաղադրումը, հետախոսավարուհի բառի սերմանը՝ հետախոս>հետախոսավար, որից հետո միայն՝ հետախոսավարուհի:

Այսինքն, այս կարգի բառերի մեջ բառակազմական տեսակետից «բարդման և ածանցման համակցություն» մասին խոսք չի կարող լինել՝ բարդումը նախորդել է ածանցմանը:

բ. «Շարահյուսական ազատ բառակապակցություններից», ինչպես՝ նրազվառոց (ճրագը վառել), կուծ կտորուկ (կուժը կտորել) և այլն: Սրանց պետք է ավելացվեն նաև է կետում նշված «բառակապակցական հարադրությունների» (փոքրասիական<Փոքր Ասիա, սևծովյան<Սև ծով և այլն) և դ կետի բայական հարադրությունների ածանցումները (իրարանցում<իրար անցնել, վերլուծում<վերլուծել և այլն): Այս երեք կարգի բառերը իրենց բնույթով (բառակազմական տեսակետից) նույնն են և հայերենագիտության մեջ բավականին մանրամասնաբար նկարագրված են որպես բառակապակցական հիմքերով կառույցներ:

Ո՞րն է բառակապակցական հիմքերի հիմնական առանձնահատկությունը: Ակնհայտորեն այն, որ դրանք, սովորաբար, որպես բառային ամբողջական (միասին հնչվող ու գրվող) և առանձին ինքնուրույնաբար գործածվող միավոր հանդես չեն գալիս: Օրինակ՝ ունենք տասնհարկանի, յոթգլխանի, նորնախիջևանցի և այլ ածանցավոր բառեր, բայց նրանց բառակազմական հիմքերը (տասհարկ-, յոթգլխ-, նորնախիջևան-) որպես առանձին, անկախաբար գործածվող բարդ բառ գոյություն չունեն. կան տաս հարկ, յոթ գլուխ, նոր նախիջևան բառակապակցությունները, որոնք և հիմք են դարձել վերոհիշյալ ածանցումների: Այսինքն՝ ստեղծվել է ոչ թե բարդ բառ, այլ բարդ հիմք, որը ինքնուրույն բառային գործածություն չունի, իսկ ինքնուրույն բառային գործածություն չունեցող հիմքերը ժամանակակից հայերենում սովորական են:

գ. Քննարկվող բնույթի ածանցավոր կառույցներ, ըստ «Հայերենագիտական բառարանի» կազմվում են նաև «գրաբարյան առ, գ, ընդ, ըստ, ի, ց նախդիրներով բաղադրություններից, կամ նրանց նմանակությամբ կազմվածներից»: Գրաբարյան նախդրավոր կազմություններին մենք դեռ անդրադառնալու ենք, բայց այստեղ չենք կարող շնչել, որ այս ենթախմբում բերվում են խիստ տարբեր ծագում և սերման ընթացք ունեցող բառեր, թեև բոլորի մեջ էլ ածանց կա:

Դրանցից առկայ-ություն, արևթեր-ություն, ան-ընդհատ, առանձն-անալ բառերը կազմված են ընդգծված, որպես ինքնուրույն բառ գործածվող ածականներից և մակբայներից, առնմանությունը, առնակատումը, զանցանքը, ընդդիմությունը ծագմամբ բայանուններ են (առնակատումը համաբանական կազմություն է), օրստօրե-ն, ըստամենայնի-ն, ինճնստիեմյան-ը կցական բարդություններ են, և նրանց մեջ ածանցումը բառակազմական վերջին քայլը չէ (իսկ բառակազմական վերլուծումներում դրանով է որոշվում բաղադրության տեսակը), իսկ ընդունակ-ը և իհարկե-ն, թերևս նաև առարկել-ը, կազ-

մըվել են նախդիրների կցումով: Մնում են առօրյա և ընդերկրյա բառերը, որոնք մինչև այժմ նկարագրված բառակազմական ոչ մի կաղապարի չեն պատկանում, և որոնց կանդրադառնանք ստորև:

դ. Այս ենթախմբի բոլոր օրինակները կազմված են հարադրական բայերից՝ ում կամ ություն ածանցով կազմված բայանուններ են (իրարանցում <իրար անցնել, վրեժխնդրություն < վրեժ խնդրել և այլն): Համապատասխան բայերից կազմված բայանուններ են նաև և կետում բերված այլալուծում (<այլայլել), արարիչ (<արարել), արծարծում (<արծարծել) և ջախջախում (<ջախջախել) բառերը: Սրանից բնականաբար բխում է, որ թվարկված բոլոր բառերի մեջ հիմքի բարդացումը, որպես բառակազմական քայլ, նախորդել է ածանցմանը (նախ կազմվել է բայը, որից էլ՝ բայանունը), այսինքն՝ բառակազմական հիմքերը ոչ թե «անկախ գործածություն չունեցող բաղադրյալ՝ բարդ հիմքեր» են, այլ ունեցող, և, բնականաբար, այստեղ շպիտի բերվեին:

Ինչ վերաբերվում է և կետում բերված մնացած բառերի հիմքերին, ապա միջերկրական-ի հիմքը հնագույն միջերկրային է, միջբուհական բառը կազմված է բուհական հիմքից, կեսդարյա, շաբաթօրյա և նման բառերի բառակազմական հիմքերը, ինչպես ճիշտ կերպով դիտարկված է հեղինակի կողմից, բառակապակցական են (կես դար, շաբաթ օր և այլն):

Առանձին են մնում քաբարոտ < քարոտ-քարոտ, խորխորատ < խոր-խորատ, դողդողալ < դողալ-դողալ կառույցները, որոնք կազմված են նույնիսկ նախագրային վաղնջական հայերենում առկա գործուն կաղապարներով ու ծավալվել են ժամանակակից հայերենում (այդ մասին տե՛ս Գ. Զահուկյան, «Հայոց լեզվի պատմություն: նախագրային ժամանակաշրջան», Երևան, ԳԱ, 1987, էջ 251) և կարող էին բավարար հիմք դառնալ համաժամանակյա բարդման ու ածանցման մի բառակազմական եղանակի, բայց, ցավոք, այդ ուղղությամբ ուսումնասիրությունները առայժմ մնում են ցանկալի:

Եվ վերջպես զ կետում խմբավորված են ածանցավոր հիմքերով բարդացումները (գրչակոթ և այլն), բայց այս կառուցվածքի բառերի մեջ (գրթասեր, սրճաղաց, մտքափոխ և այլն) ածանցումը բառակազմական վերջին քայլը չէ, հետևաբար և դրանք ածանցավոր բառեր չեն կարող համարվել բառակազմական տեսակետից. ածանցները նրանց սերող կամ բաղադրող հիմքերի բաղադրիչներն են:

Ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ որպես բարդաածանցում «բառակազմական եղանակի» համար բերված օրինակներից և ոչ մեկում համաժամանակյա բարդացում և ածանցում չի կատարվել, իսկ առօրյա ու ընդերկրյա բառերը այդպիսին են թվում միայն արտաքուստ և նրանց բաղադրիչների իրական հարաբերությունը և սերման աստիճանականությունը պարզելու համար անհրաժեշտություն է առաջանում դիմելու գրաբարին, որը և անում ենք:

Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» ուսումնասիրության մեջ գրաբարի համադրական բարդությունները նկարագրված են ածանցման և բառաբարդման կաղապարների միջոցով ըստ բառակազմական երկու զխավոր եղանակների՝ բառաբարդման և ածանցման, ըստ որում նա բաղադրյալ բառի բառակազմական որ եղանակին պատկանելը, որպես հիմնական գիտական սկզբունք, որոշում է բառակազմական վերջին քայլով:

Դրա հետ միասին նկատի ունենալով, որ բառակազմական քայլերի հաջորդականություն որոշ բաղադրություններում չի դիտարկվում (կամ դժվար է հավաստիորեն դիտարկել), անհրաժեշտ է համարվում առանձնացնել այսպես կոչված «խառը տիպի» կաղապարներ, որին պատկանող կառույցները հեղինակի կարծիքով առաջացել են բաղադրիչների միաժամանակյա կցումով,

բառակազմական մեկ քայլի ընթացքում, «որի հետևանքով ստացվում են բուն իմաստով բարդածանցավոր կամ նախածանցավերջածանցավոր բառեր» (էջ 287—288):

«Խառը տիպ» կոչվածի տակ բերված են երկու կարգի կառույցներ՝ ա. բառակապակցական հիմքերով (երեքգմբեթանի, հինգամեակ, երեքօրեայ և այլն), բ. «նախածանցավերջածանցավոր»:

Առաջին խմբից անվերապահորեն պետք է հանվեն հոդակապավոր բազմարմատ հիմքերով բառերը, և հեղինակն ինքն էլ դրանք «խառը տիպի» մեջ է դնում միայն պայմանականորեն, նկատի ունենալով, որ դրանց սերող հիմքը վկայված չէ 5-րդ կարի գրաբարում:

Մնում են բուն բառակապակցական հիմքերը, որոնց մեջ բառակազմական երկու քայլ իսկապես կա, բայց դրանցից մեկը՝ բարդացումը վերաբերվում է հիմքակազմությանը, և պետք է քննվեր աշխատության այդ բաժնում, որպես յուրահատուկ հիմքատարբերակ, իսկ մյուսը՝ ածանցի հավելումը, բուն բառակազմությանը առնչվող խնդիր է:

«Նախածանցավերջածանցավոր» կոչված խմբում, ըստ հեղինակի, տեղի է ունեցել «նախածանցի և վերջածանցի միաժամանակյա կցում» (էջ 294): Բերված օրինակների մեծամասնությունը իր կազմում ունի յ (ի) նախածանց և ս մակբայակերտ կամ, մի քանի բառում, այլ վերջածանցներ: Ս մակբայակերտի ծագումը և գործառությունը գրաբարում հանրահայտ է. ամենավրստահելի աղբյուրներից կմատնանշեինք՝ Ա. Աբրահամյան, Գրաբարի քերականություն (1958, էջ 295—298) և Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը (1984, էջ 77—79), միաժամանակ արձանագրելով, որ նշված հեղինակներից ոչ մեկը յ—ս միաժամանակյա հավելում չի դիտարկում:

Այժմ քննարկենք Լ. Հովսեփյանի բերած բառերը՝ դրանց բառակազմական հիմքերը որոնելով գրաբարի ավելի մեծ ժամանակահատվածում: Պարզվում է, որ այդ բառերի հիմքերը ինքնուրույն բառային գործածության բազմաթիվ վկայություններ ունեն, որոնք բերված են Հայկազյանում: Այսպես՝ անաշեայ < անաշխ, անգեդեայ < անգեդ, յայլուստ < այլուստ, յերկնուստ < երկնուստ, յանգէտս < յանգէտ, յանկարծուստ < յանկարծ, յանխնայս < յանխնայ, յանհոգս < անհոգս, ինչպես նաև՝ յանգզայս < յանգզայ, յարբունուստ < արբունուստ և այլն, և այլն: Այսինքն՝ ս և ուստ մակբայակերտով կառույցների մի մասը բաղադրվել է յ- նախդիր-նախածանցի հավելմամբ, մյուսները արդեն իսկ իրենց կազմում յ- են ունեցել, երբ ստացել են ս մակբայակերտը:

Նման կառուցվածքի բառերի յ-ով և առանց յ-ի տարբերակներ գրաբարում շատ սովորական են (ասենք՝ արտաքուստ—յարտաքուստ և այլն):

Այնուամենայնիվ, կա՞ն բառեր, որոնք կարող են միաժամանակյա ածանցման գոյությունը հաստատելու համար հիմք հանդիսանալ: Լ. Հովսեփյանի բերած հարյուրավոր օրինակների մեջ երկու այդպիսի բառ կա՝ ստորեկրեայ և ենթալուսնայ, երկուսն էլ ակնհայտորեն հունարան պատճենումներ՝ կազմված մակբայական նախամասնիկներով:

Չափազանց քիչ չե՞ն այս օրինակները բառակազմական նոր եղանակ ըստ եղծելու համար:

Այժմ, արդեն, կարող ենք նորից անդրադառնալ ժամանակակից հայերենին:

Աշխարհաբարի բառակազմությունը գրաբարատիպ է հատկապես բառակազմական կազապարներով, և ոչ մի տարօրինակ բան չկա այն բանում, որ գրաբարյան գրական ամենահին վկայությունն ունեցող բառերը այսօր էլ կենսունակ են ու նորաշունչ, թեև, շատ դեպքերում, ինչ-ինչ շափով նաև նորի-

մաստ: Այստեղ քիչ կարևոր դեր չի կատարում նաև այսպես կոչված կաղապարային համաբանությունը:

Այս կարգի կառույցների լայն տարածման համար շատ նպաստավոր երկու հանգամանք է առկա: Առաջինը ներլիզվական գործընթացն է՝ գրաբարյան նախդիրների ածանցացումը, երբ միասին հնչվելով ու գրվելով իրենց խնդրի հետ, դրանք սկսեցին ընկալվել որպես մաքուր նախածանցներ, թեև դրանց մեծ մասը պահեց իր նախդրային նշանակությունը: Եվ ահա, երբեմնի գրաբարյան կամ նրանց նմանությունամբ նոր կազմված՝ գրաբարատիպ նախդրային և նախածանցամակբայական կապակցությունների հետագա ածանցումը տվեց այնպիսի կազմություններ, ինչպես՝ ընդջրյա, առափնյա, ստործովյա, ենթազետնյա, շուրջերկրյա, որոնք, ավելի ճիշտ որոնց հիմքերը ակնհայտորեն կազմված են հնագույն ստորերկրեայ և ենթալուսնեայ ու նման կառուցվածք ունեցող այլ բառերի, ինչպես և այժմ սովորական ծովեզրյա, գետափնյա, գետեզրյա և այլ բազմաթիվ կազմությունների կաղապարային համաբանությամբ: Զպետք է աչքաթող անել նաև երկրորդ հանգամանքը. մեր երբեմնի հիմնական փոխատու լիզվի՝ ռուսերենի և հայերենի այդ կարգի բառերի կառուցվածքային նույնությունը: Նույնը վերաբերվում է -յան, -յակ և այլ մի շարք ածանցներով համանման կազմություններին:

Հանրահայտ է, որ բառային ինքնուրույն գործածություն ունեցող հիմքերով ունենք՝ անդրբայկալ-յան, անդրկովկաս-յան և դրանց կողքին՝ անդրծովյան, մերձվոլգյան, մերձուրալյան և, գուցե և հարյուրավոր, ժամանակակից հայերենում այնքան հեշտ կազմվող այլ կառույցներ:

Բուն հայկական կառույցներում մի բան ակնհայտ է. առաջին՝ նախդրանախածանցային բաղադրիչը հարաբերում է սկզբնահիմքին կամ առաջնային հիմքին (ստորգետն-, ենթալուսն-, ընդծով- և այլն), իսկ ածանցը այդ երկուսին միասին, որպես ամբողջական հիմքի: Գրա լավագույն ապացույցն այն է, որ այդ կարգի բաղադրությունների խոսքիմասային պատկանելությունը որոշվում է հենց ածանցով:

Հատկանշական է, որ «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ նման կառույցները վերջին հաշվով ածանցավոր բաղադրություններ են համարվում, այսինքն՝ ածանցումը կամա-ակամա դիտվում է որպես բառակազմական վերջին քայլ:

Վերևում ասվածը, թվում է, մեզ բավարար հիմք է տալիս կասկածելի համարելու նախածանցավերջածանցավորման, որպես առանձին ինքնուրույն բառակազմական եղանակի առկայությունը հայերենում, և եղած կազմությունները դիտել որպես կաղապարային համաբանություններ:

С. А. ГАЛСТЯН—«Смешанный» способ словообразования («префиксально-суффиксальный» и «суффиксально-сложный») в армянском языке.— В статье на основе анализа аффиксальных образований автор делает заключение, что в армянском языке при каждом шаге деривации к образующей основе присоединяется одно непосредственно составляющее. В многоаффиксальных словах присоединение аффиксов имеет место последовательно, а одновременная префиксация и суффиксация (парасинтез) не свойственны армянскому языку. Мотивированные слова такого типа в переводной литературе с русского языка представляют собой структурные кальки или образования по аналогии, которые не нарушают общую систему аффиксации армянского языка.